

**ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական
հաստատությունների կողմից 2018թ.-ի ընթացքում իրականացված ծրագրերի
մասին**

2018թ իրականացվել են բնապահպանական թեմաներով դաստիարակչական աշխատանքներ, ինչպես ավանդական դարձած, այնպես էլ նոր համագործակցությունների արդյունքում ծնված ծրագրեր, ակցիաներ, արձարծվել են կարևոր բնապահպանական թեմաներ:

Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցի էկոակումբի բարձր դասարանների աշակերտները կազմակերպել և անց են կացրել բաց դաս՝ «Բնապահպանական հիմնախնդիրներ» թեմայով, որին ներկա են եղել GIZ ընկերության խորհրդատու Ա.Սաղաթեյանը, ԿԱԻ Լոռու մասնաճյուղի կենսաբանության մասնագետ Կ. Մարգարյանը, մարզպետարանից Մ.Կիրակոսյանը, «Էյ Թի Փի» կենտրոնի համակարգող Գ.Մարգարյանը: Դպրոցում կազմակերպվել էր նաև «Երկրորդ կյանք» թափոնների» ցուցահանդեսը, որին մասնակցել են դպրոցի բոլոր դասարանները: Էկոակումբի սաները մասնակցել են նաև «Դեմ ենք պլաստիկին» և «Թուղթը աղբ չէ» բնապահպանական ակցիաներին: Դպրոցում տեսակավորվել է թուղթը և պլաստիկը: Նաև ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՀ Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպած աշխատանքներին:

Մարզի մի քանի ուսուցիչներ մասնակցել են URBAN հիմնադրամ գերմանական համագործակցություն ՀՀ-ում և շրջակա միջավայրը» երկօրյա դասընթացին և ՀՀ ԳԱԱԵԳԻ Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանում ՀՀ Սպիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ» մրցույթ- միջոցառմանը:

Վանաձորի Գ. Չաուշի անվան 24 միջնակարգ դպրոցում գործում է Էկոակումբ, որը մասնակցություն է ունեցել ՀՀ «Թուղթը աղբ չէ» նախաձեռնությանը: Հանձնելով դպրոցում հավաքված թղթի թափոնը դպրոցը ստացել է բակի նստարան :

Էկոակումբի նախաձեռնությամբ պատրաստվել է «Կյանքն առանց պոլիէթիլենային տոպրակների» սոցիալական գովազդը: Դպրոցում տեղի է ունեցել հանդիպում բնապահպան Անի Խաչատրյանի հետ՝ «Պլաստիկին երկրորդ կյանք» թեմայով, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության համատեքստում աշխատաժողով ՔՈԱՖ Սմարթ կենտրոնում, ՀՀ «Պահպանենք հողը» հեռավար դաս՝ Մարգահովտի Մայքլ և Վիրջինիա Օհանյանների անվան բնապահպանական կրթության կենտրոնի հետ:

Վանաձորի թիվ 16 դպրոցն իրականացրել է՝ «-Plastic+Life» նախագիծը Իթվինինգ ծրագրի շրջանակներում:

ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կարո Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոցը 2018թ. միացել է ՀՀ Մաքուր Հայաստան» ծրագրին և արժանացել շնորհակալագրի:

Ալավերդու թիվ 11 միջնակարգ դպրոցի աշակերտները այցելել են Ալավերդու պղնձաձուլական գործարան՝ օդի աղտոտվածության վրա գործարանի ազդեցության ուսումնասիրման նպատակով :

Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցում իրականացվել է դպրոցի բակի լվացում՝ ախտահանում ծանր մետաղներից:

Մարզային ենթակայության դպրոցների մեծամասնությունը համագործակցել է Մարզահովիտի Մայքլ և Վիրջինիա Օհանյանների անվան «Էյ Թի Փի» բնապահպանական կենտրոնի հետ: